

կիրեանէ և մեզ զրկուած Պ. Լ. Համար-
ձուսեանէ: Ասոնց կանոնագիրն հետեւեալն
է՝ զոր կ'արտասպակենք.

ԱՌՌԱՐԵԱՅ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՍԻՐԱՅ ԽՈՒՄԲԻՆ

Բարեգէ Հայ Երաժշտասիրաց Խումբը, կազմուած
զազուկի երիտասարդներէն, նպատակ ունի հայ ե-
րաժշտութիւնը ներկայացնել իր բարձրութեան մէջ,
մասնակցելով հայկական հանդէսներու և ի մասնաւորի
հայ եկեղեցւոյ արարողութեանց:

Խումբին կրեան մասնակցիլ ամէն տնոց, որոնք եր-
գելու ընդունակութիւն ունին:

Խումբը ունի վարչական մարմին մը, բնաւորաւ ընդ-
հանուր ժողովէն:

Վարչական մարմինը կը բաղկանայ ներկայացուցիչէ
մը և զանապալանէ մը: Խումբին ծախքերը կը հոգացուին
համակիրներէ անոնցման նուէրներով:

Ընդհանուր ժողովը կը զուարթի ամէն 3 ամիս, որ
զանապալանը կը ներկայացնէ իր հաշիւները:

Ընդհանուր ժողովը իրեն կը վերապահէ վարչական
մարմինին պաշտօնավարութեան շրջանը:

Խումբի կազմավորածման պարագային զոչքերը կը
յանձնուին Հոգեւոր Հովիբին:

Ինչպէս որ կը տեսնուի՝ այս երիտա-
սարդներուն բուն փափաքն է զարգացը-

նել մեր եկեղեցական երաշտութիւնը, ցուցը-
նել օտարներուն որ Հայ տարրը ամէն
մասնահնդիկի մէջ զարգանալու ատակ է,
թէ գեղարուեստի այս մասնահնդիկին մէջն
ալ կրնայ զերազանցել, վերջապէս թէ
ունի նա նուր ճաշակ մը:

Անշուշտ սրտայայտ տեսարան մը պի-
տի ըլլայ՝ ներկայ գտնուիլ Բարեգու Ազ-
գային Վսեմ Տաճարին մէջ այս երաժշ-
տութեան, որ միտքը կը բարձրացնէ,
հոգին կ'ազնուացնէ... Յաջողութիւններ
Հայ Երաժշտասիրաց Խումբին:

« ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱ-
ՅՈՑ » . — Բարեկարեակ բրոֆ. Կ. Յ.
Բասմաջեանի այս փոքրիկ երկն ալ ստա-
տած ենք հեղինակէն, որ 8 էջերէ կը
բաղկանայ, հոս կը գտնուին Հայոց Պատ-
մութեան Սկիզբէն Ռինչ (885 Ք. Ա.-433
Յ.Ք.) Արշակունեաց Թագաւորութեան ան-
կումը՝ մեր Ազգին վրայ իշխողաց բոլոր
անունները՝ իրենց թրականներով, Սա-
առձեռն տնտրակիկը՝ մեծ դիւրութիւն
կ'ընծայէ անոնց, որ կ'ուզեն գիտնալ
հայ ժամանակագրութեան յառաջնադա-
ցումը:

ARMENIA

Այս իտալական ամսօրեայ թերթը՝ այս անգամ միացուած է Մարտ-Ապրիլ թիւերը, աւե-
լի ճոխ պարունակութեամբ, բազմաթիւ պատկերներով, և ընտիր յօդուածներու շարքով: Սա
միակի թերթն է Խաւիլոյ մէջ՝ որ յամառ յարատեւութեամբ, ժիւր ջանքերով կը ճգնի՝ բարձր նպա-
տակի մը համար, ծանօթացնելու իտալական ազգին՝ Հայուն մարտիրոսութիւնը, ներկայապէս
կրածները, ցուցնել որ նա զուր տեղ կը չարչարուի, ըմբռնել տալ որ այս ազգը մեծ հանճարներ
ստեղծեմ է. և ասոր իբրև ապացոյց՝ կը բովանդակէ շատ մը թարգմանութիւններ մեր մե-
ծանուն հեղինակներուն, ինքնագրութիւններ և այլն: Այս թերթը այլ ևս մեծ ճիւղաւորումներ ա-
ռած է Խաւիլոյ մէջ և դուրսը. նախարարներէ և երեսփոխաններէ սկսեալ բաժանորդներ ունի:
Ամենուն կը յանձնարարենք ամենաշնչին զոհողութեամբ մը բաժանորդագրուելու այս թերթին:
Տարեկան գինն է Ֆր. 5 արտասահմանի համար, իսկ Խաւիլոյ մէջ Ֆր. 2,50: Դիմիլ

Spett. Periodico « Armenia »

Corso Regina Margherita 73,

TORINO (Italia)